



2020 թ. Հայաստանում վերականգնվող էներգետիկայից ստացվող էներգիան կարող է հնգապատկվել

15:09, 28 Հունիս, 2011

ԵՐԵՎԱՆ, 28 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 2020 թվականին Հայաստանում վերականգնվող աղբյուրների օգտագործման

հիման վրա արտադրվող էներգիան ներկայիս մակարդակի համեմատ կարող է հնգապատկվել: 2010 թ-ի վերականգնվող էներգետիկայի (ՎԷ) աղբյուրների հիման վրա Հայաստանում արտադրվել է մոտ 310 ԳՎտժ էլեկտրաէներգիա, 2015 թ-ին այս ցուցանիշը կարող է կազմել մոտ 740 ԳՎտժ, իսկ 2020 թ-ին հասնել մինչև 1500 ԳՎտժ մակարդակի: Այս հաշվարկը կատարել է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամն իր՝ ՀՀ-ում ՎԷ-ի զարգացման ուղեցուցային ծրագրի շրջանակներում:

Ինչպես «Արմենպրես»-ի հետ զրույցում նշեց հիմնադրամի տնօրեն Թամարա Բաբայանը, այսպիսի զարգացումը մեծապես պայմանավորված է նախեւառաջ քաղաքական բնույթի որոշումներով եւ միջոցառումներով, եւ հետո միայն տեխնիկական բնույթի լուծումներով:

Տարատեսակ տեխնոլոգիաների տեսանկյունից Հայաստանում ՎԷ անմիջական զարգացման առավել մեծ ներուժ ունեն փոքր հզորության եւ արեւային ջրատաքացուցիչները, որոնք կարճաժամկետ հեռանկարում գնահատվել են որպես առավել գրավիչ տեխնոլոգիաներ: Դրանց ամիջապես հետեւում են ցանցային հողմաէներգետիկական եւ ջերմային պոմպերը:

Հայաստանում ՎԷ-ի զարգացման ուղեցուցային այս ծրագիրը ներկայացնում է հանրապետությունում տեխնիկապես հասանելի եւ տնտեսապես ու ֆինանսապես շահավետ վերականգնվող էներգիայի պոտենցիալը, ինչպես նաեւ սահմանում է ՎԷ-ի զարգացման նպատակները կարճաժամկետ (մինչև 2013 թ), միջնաժամկետ (մինչև 2015 թ) եւ երկարաժամկետ (2020 թ) հեռանկարներում:

Այն համառոտ նկարագրում է այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ քայլերը: Հայաստանն ունի սահմանափակ բնական պաշարներ եւ ստիպված է հանաձո առաջնային էներգակիրներ ներկրել, ուստի եւ գտնվում է 97 տոկոս ներկրումային կախվածության մեջ: Մակայն Հայաստանը կարող է օգտվել երկրում առկա վերականգնվող էներգիայի զգալի պաշարներից, որոնք եւ կարող են կիրառվել արդի էներգետիկայի 3 հիմնական ոլորտներում՝ էլեկտրական եւ ջերմային էներգիաներից արտադրություն եւ տրանսպորտ: